Սահակ ՍԱՐԳՍՅԱՆ

Ծնվել է 1976թ. հունվարի 11, Երևանում:

1997-1998թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում:

Կրթությունը՝

1992-1997թթ. — ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետ, թյուրքագիտության բաժին,

2002-2004թթ. — Հարավային Կալիֆորնիայի համալսարանի միջազգային հարաբերությունների դպրոց, միջազգային հարաբերությունների մագիստրոս,

Մասնագիտական դասընթացներ՝

2000թ. — Թաֆթսի համալսարանի ֆլեթչերի իրավունքի և դիվանագիտության դպրոց, Մեդֆորդ, Մասաչուսեթս, ԱՄՆ

2006թ. — ՆԱՏՕ-ի Պաշտպանական քոլեջ, Հռոմ, Իտալիա

Աշխատանքային գործունեությունը՝

1997-2007թթ. — ՀՀ ԱԳՆ Մերձավոր և Միջին Արևելքի վարչություն, Թուրքիայի բաժնի կցորդ, ապա՝ երրորդ քարտուղար,

2007-2010թթ. — Լոս Անջելեսում ՀՀ գլխավոր հյուպատոսության երրորդ քարտուղար,

2010-2012թթ. — ՀՀ ԱԳՆ Ամերիկայի վարչություն, ԱՄՆ և Կանադայի բաժնի երրորդ, ապա՝ երկրորդ քարտուղար,

2012-2016թթ. — ՄԱԿ-ի կենտրոնակայանում ՀՀ մշտական ներկայացուցչության երկրորդ, ապա՝ առաջին քարտուղար,

2016-2017թթ. — ՀՀ ԱԳՆ միջազգային կազմակերպությունների վարչություն, ՄԱԿ-ի բաժնի առաջին քարտուղար,

2017-2018թթ. — ՀՀ ԱԳՆ սահմանակից երկրների վարչություն, 3-րդ բաժնի վարիչ,

2018-2019թթ. — ՀՀ ԱԳ նախարարի օգնական,

2019-2023թթ. — Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպությունում ՀՀ մշտական ներկայացուցիչ:

Օտար լեզուներ՝

Ռուսերեն, անգլերեն, թուրքերեն:

Դիվանագիտական աստիճանը՝

Արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար:

Ընտանեկան կարգավիճակը՝

Ամուսնացած է, ունի երկու որդի և դուստր:

2023* թվականի դեկտեմբերի *6*-ին ՀՀ նախագահի հրամանագրով նշանակվել է Եթովպիայի Դաշնային Ժողովրդավարական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան *(նստավայրը՝ Ադիս Աբեբա):